ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՏՈՒԱՆ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Մայիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հավարտ Սուրբ Պատարագի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մայր Տաճարի հյուսիսային կողմում կառուցվող նոր մկրտարանի՝ Ս. Վարդան եկեղեցու և Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատռան հիմնարկեքը: Մայր Աթոռի նոր մատուռ-մկրտարանը կառուցվում է ՀՀ նախկին վարչապետ Արմեն Սարգսյանի և նրա ընտանիքի ազնիվ բարերարությամբ: Շենքը նախագծել է վաստակաշատ ճարտարապետ Ջիմ Թորոսյանը:

Հանդիսավոր արարողության ընթացքում օրհնվեցին 16 հիմնաքարեր և դրվեցին մկրտարանի հիմքերում: Մկրտարանի հիմքում զետեղվեց նաև կառույցի հիմնադրման հուշագիրը:

«*Այսօր մենք Ձեզ հետ միասին կատարեցինք հիմերի օրհնության արարողությունը Սուրբ Վարդան եկեղեցու և Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատռան, որոնք պիտի դառնան Մայրավանքի մկրտության սրբազան կառույցները: Այստեղ պիտի գան հայորդիք՝ վերածնվելու հոգևոր ավազանից մեր Սուրբ Եկեղեցու, պիտի գան՝ դրոշմվելու Սրբալույս Մյուռոնով և դառնալու Քրիստոսի Եկեղեցու և ժողովրդի նախանձախնդիր զավակներ:*

Մենք փառք ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը այսպիսի հնարավորություններ է ընձեռել հատկապես այս օրերին, երբ 70 տարիների անհավատությունից հետո մեր ժողովուրդը հոգևոր կյանքի վերազարթոնք է ապրում և իր քայլերը ուղղված է պահում դեպի ճանապարհները սրբազան վանքերի, եկեղեցիների ու տաճարների: Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում նաև, որ Տերը պարգևում է մեզ բարերար զավակներ, ովքեր իրենց արդար քրտինքի վաստակը բերում են շաղախելու հայոց հողին՝ զորացնելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և պայծառացնելու հայորդիների հավատքը»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը մկրտարանի կառուցման առիթով:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաև Սուրբ Վարդան եկեղեցու և Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատռան բարերար Սարգսյան ընտանիքին, որի անդամները ներկա էին հիմնարկեքի արարողությանը: Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ուղղեց նաև մկրտարանի ճարտարապետ Ջիմ Թորոսյանին, ինչպես նաև «Հորիզոն 95» շինարարական կազմակերպությանը:

Նոր մկրտարանի կառուցումը նախատեսվում է ավարտել մեկ տարում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԿՐՏԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԳՈՒՌԱՖՆԼԱԿԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ